**Արձանագրություն N 15**

**Протокол N 15**

**«ԵՔ-ԵՓՄԱՇՁԲ-21/1» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի**

**Заседания комиссии процедуры закупки под кодом «EQ-EPMAshDzB-21/1»**

ք. Երևան

25.09.2021թ.

г. Ереван

ժամը 11:00

25.09.2021г.

11:00ч.

Մասնակցում էին

Հանձնաժողովի նախագահ՝ Հրաչյա Սարգսյան

Հանձնաժողովի անդամներ՝ Արթուր Սարգսյան, Դավիթ Ճգնավորյան, Գրիգոր Հարությունյան, Սուրեն Օհանյան, Անդրանիկ Սեդոյան, Գևորգ Ավետիսյան, Վահե Բալասյան, Էդգար Գալստյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Համբարձումյան

Բացակայում էր՝ Վահե Բալասյան

Участвовали

Председатель комиссии Г. Саргсян

Члены комисии: А. Саргсян, Д. Чгнаворян, Г. Арутюнян, С. Оганян, А. Седоян, Г. Аветисян, Э. Галстян

Секретарь комисии: А. Амбарцумян

Отсутствовал:

Член комисии: В. Баласян

1. **Տեղեկություններ «ԵՔ-ԵՓՄԱՇՁԲ-21/1» ծածկագրով գնման ընթացակարգի 2-րդ փուլի հայտերում առկա անհամապատասխանությունների մասին**
**Информация о несоответствиях в заявках 2-го этапа процедуры закупки под кодом EQ- EPMAshDzB-21/1**

---

(Հ. Սարգսյան
Г. Саргсян)

1.1 Գնահատող հանձնաժողովն ուսումնասիրելով մասնակիցների կողմից ներկայացված հայտերը՝ «ԳԵՈԴԱՏԱ, ՍԻՎԵՆ, ՍԻՏԵԿՈ» Համատեղ Ձեռնարկության կողմից ներկայացված հայտում արձանագրել է հետևյալ անհամապատասխանությունները հրավերի պահանջների նկատմամբ,

-անձնակազմում ներառված աշխատակիցների դիպլոմների և անձնագրերի պատճենները ներկայացված են իտալերեն լեզվով, աշխատակիցների կողմից ներկայացված համաձայնությունները պետք է ներկայացվեր հայերեն լեզվով, ներկայացվել է անգլերեն լեզվով, որը հակասում է հրավերի 4.6 կետին, որի վերաբերյալ ընկերությանը ներկայացվել էր նաև պաշտոնական պարզաբանում, որ հայտում ներառված բոլոր փաստաթղթերը պետք է ներկայացվեն հայերեն լեզվով, իսկ որակավորմանը կից ներկայացվող փաստաթղթերը /աշխատակիցների վերաբերյալ տվյալները՝ անձնագրերի, որակավորումը հավաստող փաստաթղթերի պատճենները, նմանատիպ պայմանագրեր/ կարող են ներկայացվել և/կամ հայերեն, և/կամ ռուսերեն, և/կամ անգլերեն,

-նախկինում կատարված պայմանագրերը ներկայացվել են թերի, ամբողջական պայմանագրերը բացակայում են, ներկայացվել են պայմանագրերի հիմնականում առաջին և վերջին էջերը: Ընկերության կողմից ներկայացվել են ընդհանուր տեղեկատվություն պայմանագրերի վերաբերյալ:

Ներկայացվել են գրություններ նախկինում կատարված պայմանագրերի պատշաճ կատարման վերաբերյալ, սակայն հաշվի առնելով, որ բացակայում են բուն պայմանագրերը՝ գնահատող հանձնաժողովը չի կարող գնահատել ներկայացված գրությունները:

1.1 Оценочная комиссия, рассмотрев заявки, представленные участниками, отметила следующие несоответствия требованиям приглашения в заявке, представленной совместным предприятием „ГЕОДАТА, СИВЕН, СИТЕКО".

- копии дипломов и паспортов сотрудников, входящих в штат, представлены на итальянском языке, представленные сотрудниками соглашения должны были быть представлены на армянском языке, но представлены на английском языке, что противоречит пункту 4.6 приглашения, о котором компании было также предоставлено официальное разъяснение, что все документы, включенные в заявку, должны быть представлены на армянском языке, а документы, приложенные к квалификации (данные сотрудников – копии паспортов и документов, подтверждающих квалификацию специалистов, аналогичные договора), могут быть представлены и/или на армянском, и/или на русском, и/или на английском языках;

- договора, заключенные ранее, были представлены не полностью, полные договора отсутствуют, в основном были представлены первая и последняя страницы договоров. Компания предоставила общие сведения о договорах. Были представлены письма относительно надлежащего исполнения ранее заключенных договоров, но, учитывая тот факт, что оригинальные договора отсутствуют, Оценочная комиссия не может оценивать представленные письма.

1.2 Ելնելով վերոգրյալից՝ գնահատող հանձնաժողովը որոշեց ծանուցել մասնակցին մեկ աշխատանքային օրվա ընթացքում /մինչև 28.09.2021թ./ շտկել արձանագրված անհամապատասխանությունները: Անհամապատասխանությունները շտկելու դեպքում հայտը կգնահատվի բավարար, հակառակ դեպքում հայտը կգնահատվի անբավարար և կմերժվի: Միաժամանակ տեղեկացնեմ, որ անհամապատասխանության չշտկումը կդիտվի գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ստանձնած պարտավորության խախտում:

1.2 На основании вышеизложенного, Оценочная комиссия решила уведомит участника в течение одного рабочего дня /до 28.09.2021 г./ исправить зафиксированные несоответствия. В случае исправления несоответствий заявка будет оценена удовлетворительно, в противном случае заявка будет оценена как неудовлетворительно и будет отклонена. При этом хочу сообщить, что если несоответствие не будет исправлено, то это будет рассматриваться как нарушение обязательств участника по процедуре закупки.

1.3 Միաժամանակ, հանձնաժողովն արձանագրեց, որ «ԳԵՈԴԱՏԱ, ՍԻՎԵՆ, ՍԻՏԵԿՈ» Համատեղ Ձեռնարկության կողմից ներկայացված աշխատանքի կատարման մեթոդաբանությունը չի ներառում աշխատանքի կատարման ժամկետները՝ ըստ փուլերի և օրացուցային գրաֆիկի՝ աշխատանքների կատարման սկիզբը և ավարտը, որը պայմանագրում ներառելու կարևոր տարր է հանդիսանում, դրանց բացակայությունը և չներկայացնելը /վերը նշված ժամկետում/ կանդրադառնա մասնակցի աշխատանքի մեթոդաբանությանը տրվող գնահատականի վրա:

1.3 Одновременно, комиссия констатировала, что методология выполнения работы, представленной совместным предприятием „ГЕОДАТА, СИВЕН, СИТЕКО", не включает в себя сроки выполнения работы по этапам и календарному графику-начало и завершение работ, что является важным элементом для включения в договор, их отсутствие и непредставление (в указанные выше сроки) отразится на оценке методологии работы участника.

Շտկված փաստաթղթերը մասնակիցը ներկայացնում է հրավերում նշված քարտուղարի էլեկտրոնային փոստին:

Исправленные документы участник представляет на электронную почту секретаря, указанную в приглашении:

*Ընդունվել է որոշում՝ կողմ - 8 , դեմ - 0:*
*Принято решение: за – 8 против – 0.*

**Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները և ազգանունները.**
**Имена и фамилии членов комиссии, присутствующих на заседании.**

| | | |
|---|---|---|
| Հանձնաժողովի<br>Комиссии | | |
| Նախագահ՝<br>Председатель | | Հ. Սարգսյան<br>Г. Саргсян |
| Անդամներ՝<br>Члены | | Ա. Սարգսյան<br>А. Саргсян |
| | | Դ.Ճգնավորյան<br>Д. Чгнаворян |
| | | Գ. Հարությունյան<br>Г. Арутюнян |
| | | Ս. Օհանյան<br>С. Оганян |
| | | Ա.Սեդոյան<br>А. Седоян |
| | | Գ.Ավետիսյան<br>Г. Аветисян |
| | | Վ. Բալասյան<br>В. Баласян |
| | | Է. Գալստյան<br>Э. Галстян |
| Քարտուղար՝<br>Секретарь | | Ա. Համբարձումյան<br>А. Амбарцумян |